



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

**Saint Yeghiche Armenian Church Parish**

**Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ**

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

t. +44 (0)20 7373 8133 Pastoral office email. [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)

[www.styeghiche.org.uk](http://www.styeghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

**SUNDAY BULLETIN**

**1: List of the Sunday Reading,**

**19th February 2017**


**Bulletin No 9/17**

**Պօղոս Առաքեալի Կողմէ Տիտոսի Գրուած Նամակէն 1 :1-11**

Պօղոս, Աստուծոյ ծառայ եւ Յիսուս Քրիստոսի առաքեալ՝ համաձայն Աստուծոյ ընտրեալներուն հաւատքին ու բարեպաշտութեամբ եղած ճշմարտութեան գիտակցութեան, յաւիտենական կեանքի յոյսով՝ որ անսուտն Աստուած խոստացաւ դարերու ժամանակներէն առաջ բայց յատուկ ատենին իր խօսքը բացայայտեց քարոզութեամբ՝ որ վստահուեցաւ ինձի մեր Փրկիչ Աստուծոյ հրամանով, Տիտոսի՝ հարազատ զաւակիս հասարակաց հաւատքին համեմատ. շնորհք եւ խաղաղութիւն Հայր Աստուծմէ ու Տէր Յիսուս Քրիստոսէ՝ մեր Փրկիչէն:

Ես ձգեցի քեզ Կրետէ, որպէսզի ուղղես բոլոր պակաս մնացած բաները ու երեցներ նշանակես ամէն քաղաքի մէջ՝ ինչպէս պատուիրեցի քեզի. եթէ մէկը ըլլայ անմեղադրելի, մէկ կնոջ ամուսին, եւ ունենայ հաւատարիմ զաւակներ, որոնք անատակութեան համար ամբաստանուած կամ ըմբոստ չըլլան: Որովհետեւ եպիսկոպոսը՝ իբր Աստուծոյ տնտես՝ պէտք է ըլլայ անմեղադրելի. ոչ ինքնահաւան, ոչ բարկացող, ոչ գինեմոլ, ոչ զարնող, ոչ անօթալի շահախնդրութեան հետամուտ եղող, հապա՝ հիրասեր, բարեսեր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, հաստատ բռնելով վարդապետութեան հաւատարիմ խօսքը, որպէսզի կարենայ թէ՛ յորդորել ողջամիտ վարդապետութեամբ, թէ՛ կշտամբել հակաճառողները:

Քանի որ շատ են ըմբոստները, դատարկախօսներն ու հրապուրողները, մա՛նաւանդ անոնք՝ որ թլփատութենէն են: Պէտք է պապանձեցնել զանոնք. անոնք կը կործանեն ամբողջ տուներ, եւ կը սորվեցնեն անպատեհ բաներ՝ անօթալի շահախնդրութեան համար:



**The Epistle of St Paul to the Titus 1:1-11**

Paul, a bond-servant of God and an apostle of Jesus Christ, for the faith of those chosen of God and the knowledge of the truth which is according to godliness, in the hope of eternal life, which God, who cannot lie, promised long ages ago, but at the proper time manifested, *even* His word, in the proclamation with which I was entrusted according to the commandment of God our Savior, To Titus, my true child in a common faith: Grace and peace from God the Father and Christ Jesus our Savior.

For this reason I left you in Crete, that you would set in order what remains and appoint elders in every city as I directed you, *namely*, if any man is above reproach, the husband of one wife, having children who believe, not accused of dissipation or rebellion. For the overseer must be above reproach as God's steward, not self-willed, not quick-tempered, not addicted to wine, not pugnacious, not fond of sordid gain, but hospitable, loving what is good, sensible, just, devout, self-controlled, holding fast the faithful word which is in accordance with the teaching, so that he will be able both to exhort in sound doctrine and to refute those who contradict.

For there are many rebellious men, empty talkers and deceivers, especially those of the circumcision, who must be silenced because they are upsetting whole families, teaching things they should not *teach* for the sake of sordid gain.

## 2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings'

### Յիսուս Քրիստոսի Աւետարանէն Ըստ Յովհաննէսի 7:37-52

Տօնին վերջին մեծ օրը՝ Յիսուս կայնած էր ու կ'աղաղակէր. «Եթէ մէկը ծարաւ է, թող գայ ինձի եւ խմէ: Ա՛ն որ հաւատայ ինձի, կենարար ջուրի գետեր պիտի բխին անոր փորէն, ինչպէս Գիրքը կ'ըսէ»: Ասիկա ըսաւ Հոգիին մասին՝ որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին. որովհետեւ Սուրբ Հոգին տրուած չէր տակաւին, քանի որ Յիսուս փառաւորուած չէր տակաւին:

Բազմութենէն շատեր՝ երբ լսեցին այս խօսքը՝ կ'ըսէին. «Ճշմարտապէս ա՛յս է մարգարէն»: Ուրիշներ կ'ըսէին. «Ա՛յս է Քրիստոսը»: Ուրիշներ ալ կ'ըսէին. «Միթէ Քրիստոս Գալիլեայէ՞ն պիտի գայ: Միթէ Գիրքը չ'ըսէ թէ Քրիստոս պիտի գայ Դաւիթի զարմէն ու Դաւիթի եղած գիւղէն՝ Բեթլեհէմէն»: Ուստի պատակտում եղաւ բազմութեան մէջ՝ անոր պատճառով: Անոնցմէ ոմանք ուզեցին ձերբակալել զայն, բայց ո՛չ մէկը ձեռք բարձրացուց անոր վրայ:

Ուստի սպասաւորները եկան քահանայապետներուն եւ Փարիսեցիներուն քով, որոնք ըսին անոնց. «Ինչո՞ւ հոս չ'երիք զայն»: Սպասաւորները պատասխանեցին. «Ո՛չ մէկը երբէք խօսած է այս մարդուն պէս»: Ուստի Փարիսեցիները պատասխանեցին անոնց. «Միթէ դո՞ւք ալ մոլորեցաք: Պետերէն կամ Փարիսեցիներէն մէկը հաւատա՞ց անոր. բայց այս բազմութիւնը՝ որ չի գիտեր Օրէնքը՝ անիծեալ է»: Նիկողեմոս ըսաւ անոնց, (որ նախապէս՝ զիշերուան մէջ գացեր էր իրեն, եւ անոնցմէ մէկն էր.) «Միթէ մեր Օրէնքը կը դատէ՞ մարդ մը, եթէ նախապէս չ'լսէ զայն, եւ չ'գիտնայ թէ ի՛նչ կ'ընէ»: Պատասխանեցին անոր. «Միթէ դո՞ւն ալ Գալիլեայէն ես. զննէ՛ ու նայէ՛, որ Գալիլեայէն մարգարէ չ'ելլեր»: Ապա իւրաքանչիւրը գնաց իր տունը:

### The Holy Gospel of Jesus Christ according to John 7:37-52

Now on the last day, the great day of the feast, Jesus stood and cried out, saying, "If anyone is thirsty, let him come to Me and drink. "He who believes in Me, as the Scripture said, 'From his innermost being will flow rivers of living water.'" But this He spoke of the Spirit, whom those who believed in Him were to receive; for the Spirit was not yet *given*, because Jesus was not yet glorified.

*Some* of the people therefore, when they heard these words, were saying, "This certainly is the Prophet." Others were saying, "This is the Christ." Still others were saying, "Surely the Christ is not going to come from Galilee, is He? "Has not the Scripture said that the Christ comes from the descendants of David, and from Bethlehem, the village where David was?" So a division occurred in the crowd because of Him. Some of them wanted to seize Him, but no one laid hands on Him.

The officers then came to the chief priests and Pharisees, and they said to them, "Why did you not bring Him?" The officers answered, "Never has a man spoken the way this man speaks." The Pharisees then answered them, "You have not also been led astray, have you? "No one of the rulers or Pharisees has believed in Him, has he? "But this crowd which does not know the Law is accursed." Nicodemus (he who came to Him before, being one of them) said to them, "Our Law does not judge a man unless it first hears from him and knows what he is doing, does it?" They answered him, "You are not also from Galilee, are you? Search, and see that no prophet arises out of Galilee."

### *Feast of VARTANANTZ*



*St Yeghiche Parish Council is proud to invite our faithful on the occasion of St Vartanantz, to celebrate Divine Liturgy on Thursday 27th February 2017 at 7pm at St Yeghiche Armenian Church, Cranley Gardens, Kensington London SW7 3BB, UK. His Grace Bishop Hovakim will preside and give the sermon of the day. Please bring along your children and let us celebrate the feast of St Vartan, who fell for the right of our faith.*

### 3: List of the Feasts celebrated in the Armenian church

#### Սրբոց Ղևոնդյանց քահանաների հիշատակության օր

Ավանդության համաձայն՝ այդ օրը բոլոր քահանաների տոնն է: Ղևոնդյան քահանաներն Ավարայրի ճակատամարտում սրբացած քաջորդիներն են: Նրանք քայլում էին հայոց բանակի առջև և իրենց բոցաշունչ խոսքերով քաջալերում, ոգի ու ուժ հաղորդում Քրիստոսի եկեղեցու և հայոց ինքնության համար պարսից զորքերի դեմ ոտքի ելած հայ մարտիկներին:

Տարիքով ավագը Ղևոնդ Երեցն էր, ում անվան կողքին հայ պատմիչները հիշատակում են նաև Յովսեփ կաթողիկոսի, Մահակ եպս. Ռշտունյացի, Բասենյաց Թաթևիկ եպիսկոպոսի, Մուշե կամ Մուշեղ քահանայի, Արշեն երեցի, Սամվել քահանայի, Աբրահամ և Քաջաջն սարկավազների անունները:

Վարդանանց հերոսամարտից հետո պարսից Հազկերտ արքան վրեժխնդիր եղավ հայոց քաջերից: Նրա հրամանով նահատակվեցին հայոց քաջարի հոգևորականները:

Ղևոնդյանց սրբերի հիշատակը Հայ Առաքելական եկեղեցին նշում է Բուն Բարեկենդանին նախորդող երեքշաբթի օրը:

#### Սուրբ Վարդանանց զորավարների և 1036 վկաների հիշատակության օր

451 թվականի մայիսին, Ավարայրի ճակատամարտում, հայրենիքի, հայ եկեղեցու և քրիստոնեական հավատի պահպանման համար նահատակված Վարդանանց զորավարներն ու 1036 մարտիրոսները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մեծագույն սրբերից են: Իրենց նահատակությամբ նրանք հաստատեցին հայ ժողովրդի ապրելու կամքը և լինելիության իրավունքը: Հայաստանում քրիստոնեություն ընդունելուց ի վեր Հայ եկեղեցին սերտորեն կապված է եղել հայրենիքի պաշտպանության գործին: Դրա վառ օրինակը Վարդանանց պատերազմն է: Պարսից զորքերի դեմ մղված պատերազմում հայ մարտիկների կողքին էր Հայոց եկեղեցին: Հովսեփ կաթողիկոսի և Ղևոնդ Երեցի առաջնորդությամբ: Մարտից առաջ հայ հոգևորականները ոչ միայն քաջալերում էին զորքին մակաբայեցիների օրինակով, այլև մկրտության և Սբ. Պատարագի խորհրդով առավել ամրապնդում էին նվիրյալների հավատն ու ոգին: «Եվ սեղան կանգնեցնելով՝ ամենասուրբ խորհուրդը կատարեցին, պատրաստեցին նաև ավագան, և եթե զորքի բազմության մեջ չմկրտված մարդ կար, ամբողջ գիշերը մկրտեցին. Եվ առավոտյան Սբ. հաղորդություն ընդունեցին», - գրում է Եղիշե պատմիչը Վարդանանց պատերազմից առաջ կատարվածի մասին:

Վարդանանց տոնին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում և հայկական բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սբ. Պատարագ:

#### Feast of St. Ghevond the Priest and His Companions

The Feast of St. Ghevond the Priest and His Companions is dedicated to the blessed memory of the Armenian priests who fought alongside St. Vartan and the entire Armenian Nation for their Christian faith in 451 A.D. in the Battle of Avarayr.

The eldest among them was Priest St. Ghevond, and among his companions were Catholics Hovsep, Bishop Sahak of Syunik, Bishop Tatik of Basen, Priest Mushe or Mushegh, Priest Arshen, Priest Samuel, Deacons Abraham and Kajajn.

After the Battle of Avarayr the Persian King Hazkert took revenge on Armenians and ordered to kill the brave priests.

According to the tradition the day of the Feast of St. Ghevond the Priest and His Companions is the day of the clergy.

#### Feast of St. Vartan the Captain and Companions

The Feast of St. Vartan the Captain and his 1036 Companions marks their martyrdom 1551 years ago in the battle of Avarayr, fighting for the freedom of conscience and religion for the Armenian Nation. It was to be the first testimony of many to follow that the Armenians were a people who freely chose Christ, remained steadfast in their Christian faith, and would not betray that faith for any ransom. “Vartanants” as it is commonly called, is one of the most sacred feasts of the Armenian people.

In the Armenian Church, the Feast day of St. Vartan the Captain and Companions is also celebrated as the Naming Day of His Holiness Karekin II. To mark the occasion, at the conclusion of Divine Liturgy, a Pontifical Prayer is offered before the Holy Altar of Descent.

#### 4: Հոգեհանգիստ - Memorial Service

A memorial service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Elba Karapetian and Family, IN LOVING MEMORY for the soul of all the old and new deceased members of **KARAPETIAN** and **GHARAMANIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

#### Reverence Required

Please be advised that, according to the tradition of the Armenian Church, members of the congregation are strongly reminded to refrain from walking in and out of the Sanctuary while services are in progress.

You are **especially** reminded **not to do so** during

- 1) **The Chanting of the Gospel,**
- 2) **Recitation of the Creed (Havadamk),**
- 3) **The Challis Procession,**
- 4) **The Hymn “Der Voghormya”, and**
- 5) **Distribution of the Holy Communion.**

**St Yeghiche Armenian Church is looking for people of all ages to be altar servers and choir members. If you would like to be in the choir and be uplifted by singing our beautiful "Sharagans" (hymns) just come to church on any Sunday.**

#### ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk)  
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

#### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated.

**Please remember our Church in your prayers.**

#### ANNOUNCEMENT:

*Your kind donations are gratefully accepted:*

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: “St Yeghiche Armenian Church”.

Alternatively you can arrange a standing order or donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB73MIL40022642674432, BIC: MIDLGB2106F

I wish to arrange a standing order/make a donation £ .....to the St Yeghiche Arm. Church Parish.

Name: .....

Address: .....

Tel:.....Email:.....